անդադար շարժումն, բանակի կեանքն, աշխատութիւն, վտանգ։ Ինքն զինուորական արուեստըն 'ի Գուրին սորվեցաւ։ Առաջին անգամ զէնք առաւ խռովացւոց բանակին մէջ, Նեգգահեծ երազորի գնդէն ըլլալով, ուր նշանաւոր հանդիսացաւ։ Յետոյ ուրեմն ընթացաւ Ամերիկայի պատերազմին, 'ի Նախագահ Ճնարդս, ամեն փոքր պարագային իր կեանքը վտանգի մէջ դնելով։ Թողլով զԱմերիկա, ուրիշ եւս մարզելու ոյժերը խմացաւ, և անոր համար ճանապարհորդեց աշխարհներ։ Ինքն ալ կը զուարճանայ գրիչը շարժելով, ինչպէս սուրը. գրեց զինուորական խնդրոց վրայ։

Վերջինն է Բանդիէվրի Դուքսն, ՊԵՏՐՈՍ ՓԻԼԻՊՊՈՍ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐԻԱ ՕՌԼԷԱՆՈՒ, ծնեալ 'ի 1843, որդի Փուանվիլ իշխանի։ Իր հօրը պէս նաւաստի, դրսէն երկչոտ կ'երեւի, այլ ընդհակառակն քաջասիրտ է։ Իր նաւական փորձքը Միացեալ Նահանգաց մէջ կատարեց, և պորտուգալական ծառայութեան մէջ երկու տարի զինուորութիւն ըրաւ հարաւային ծովուց մէջ. յետոյ ճանապարհորդեց 'ի Չինաստան, յԱւստրալիա, 'ի Ճապոն, երկայն պանդխտութիւն մը։

Կարելի չէ մոռնալ որ Օռլէանեանց ազգատոհմին մէջ մնացեալ չըլլայ հուրն հին ասպետական ոգւոյն և դիպուածոց սիրոյ, ձեռներէցութեանց, զինուց, ցուցեալ նաև 'ի փրանկական բանակին, ուստի կուսակցութիւն մը զինքը արտաքսեց։ Թերեւս ազնուական ազգատոհմին տակն չէ լմնցած։

# ՀՌԻՔԱՐՏՈՍ ՎԱԿՆԷՐ

Երբ Հռիքարտոս Վակնէր Գուլիելմ Թելի հեղինակին (Ռոսսինի) երաժշտախումբը «ահագին կիթառ» մը կը կոչէր, և խոտական քաղցրաբարբառ նուագները կը ծաղրածէր, անշուշտ չէր կարծեր մեռնիլ այս նուագաց հայրենեաց մէջ, յորոց յառողջարար խնամոց կը խնդրէր առողջութիւն և հանգիստ։

Մատենագիր մը անցեալ տարւոյ առաջին ամսոց մէջ կը տեսնէ զՎակնէր 'ի Բալերմօ. վտատակարեկ մարդ մը կ'երեւէր, բոլորովին ձանձրացած։ Չէր ուզեր ընդունել նաև հոյանուն խմբերգ երաժշտապետները, որոնք կ'աղաչէին ներկայանալու իրեն։ Կ'ելնէր երբեմն Արմաւենեաց պանդոկէն (Albergo delle palme), ուր իջեւանեալ էր, մերձաւոր ծովափունքը երթալու՝ այն կապուտակագոյն խորշը, այն անհուն երկինքը, այն գունոց և լուսոյ հանդէսը նկատելու համար։ Ռամիկ մարդ մը կը համարէիր զինքը. սակայն երբ կը բանար գլուխը, կ'երեւէր բովանդակ իր հոյակապ ճարտասան, լայն, ճառագայթարձակ, ամեն մտածութեանց, նշանակ հանճարոյ։

Ու թէ արդեօք ինքն հանճարոյ մարդ մ'էր՝ ոչ ոք յստակ կրնայ ժխտել զայն։ Ո՛ր այն երաժիշտ յաշխարհի՝ իրեն պէս պատերազմի և անարգութեան նիւթ եղաւ։ Բայց իրեն գործութեան գաղտնիքն այնքան կռուոց կատաղութեան մէջ մնաց։ Միայն բարձրագոյն և նորագիւտ հանճարոյ մարդկան տրուած է այնքան շարժելու այն համառարած ոգը՝ յորում կ'ապրին։

Հռիքարտոս Վակնէր ծնաւ 'ի Լիբսիա 'ի 22 մայիսի 1813ին՝ Բրիւլ փողոցին հին տան մը մէջ, 'ի թիւն 88։ Իր հայրն, դպրապետ ատենի քաղաքին, իրեն ծննդենէն վեց ամիս յետոյ մեռաւ, և մայրն նոյնհետայն անցաւ յերկրորդ ամուսնութիւն։

Զինքը նկարիչ մը կ'ուզէին ընել. այլ նա պատկերահանութեան բնաւին հոգ և փոյթ չէր տաներ։ Ընդհակառակն համ կ'առնէր 'ի բանաստեղծութենէ, և անյագաբար կը կարդար բազմաթիւ հատորներ։ Ինչպէս Պերլիոզ, ինչպէս Շուման, ծծեց Հռիքարտոս Վակնէր ալ բանաստեղծական գրականութիւնը։

Կ'ըսեն թէ Պեդհովենի միաբարբառ երգ (symphonie) մը լսելով, կը զարթնու 'ի նմա երաժշտական հանճարոյ կայծն, և իրեն առաջին միաբարբառ երգն՝ գրեալ 'ի 1832ի՝ ներշնչեալ ըլլայ իրեն հայրենակից վեհագոյն միաբարբառ երգոց նուագածուէն։

Կարոլոս Կոցցի խաղացին, արհամարհեալ և երեսէ թողուած յԻտալիա, գտաւ իրեն բուն հայրենիքը գերմանական մեծ հայրենեաց մէջ։ Իր առասպելներն թերեւս երեւակայական տարրեր պարունակելուն համար, դեռ եւս հաճոյ կ'անցնին Գերմանացւոց։ Շիլլէր օրինակեց իրմէ զԹուրանդոտ, և երիտասարդն Հռիքարտոս Վակնէր մտածեց առնուլ անկէ զՎհուկս, որ իր առաջին թատերգութիւնն (opéra) է։ Այլ թատերգութեանս չափազանց պէտքովեան և վեպէրեան գոյներն այնչափ հաճոյ չէին երիտասարդ հեղինակին, որ ինչուան այն ատենէն սկսեալ՝ յատուկ ճամբայ մը կ'ուզէր փնտռելու, և ինքն զՎհուկս դատապարտեց մոռացութեան։

Բալերմոյի Նորընծայուհին, յօրինեալ 'ի 1836ի և հանդիսացուցեալ երկրորդ տարին, ուրիշ փորձ մ'էր իր կրկնակ հանճարոյն — հանճար բանաստեղծի և երաժշտի, — այլ սակաւք յարգոյ համարեցան զայն։

digitised by A.R.A.R.@

*
* *

Այն ժամանակներն երաժշտախմբի ուղղիչ եղեր էր նախ 'ի Մակտէպուրկ և ապա 'ի Քէօնիկսպէրկ, ուր ամուսնացաւ այն թատեր դերասանուհւոյ մը հետ։ Շատ թեթևակի կատարուած ամուսնութիւն մ'եղաւ, ինչպէս կ'ըսէր և ինքն Վակնէր, որ իրեն ցաւեր պատճառեց։ Ի Քէօնիկսպէրկէ կ'անցնի 'ի Ռիկա. և փառաց ետանցն իրեն դադար չի տար. օդը կը նետէ իրեն ուղղչի գաւազանիկը, և կը սլանայ 'ի Բարիզ՝ 'ի մեծ գործանոցն հռմբուոյ, անոր մէկ փշուրը ստանալու համար։ Մէյէրպէրի յանձնարարական նամակ մ'ունէր միայն՝ առ Մաւրիտիոս Շլէզինկէր, հռչակաւոր տպագրող երաժշտութեան, որ նոյնհետայն իրեն նպաստամատոյց եղաւ... յանձն առնելով իրեն փողով այն ատեն ընդունելի եղած գլխաւոր եղանակներ (motif)։

Վհատելու բան կար, և անիծելու զբաղդը. այլ Վակնէր վհատութիւն չէր գիտեր. այն մարդն պղնձէ հաստատամտութիւն մ'ունէր։ Չկար բան մը որ զինքն իրեն առաջադրութիւններէն խրտեցընէր։ Երբ ըսեր էր կամիմ, ոչ ոք կրնար իրեն դէմ կենալ. կը հասնէր նպատակին։

Բարեբաղդաբար Շլէզինկէր ճանչցաւ՝ որ երաժշտապետը փողոյ համար գրելէն շատ աւելի աղէկ բան կրնար ընել, և նուագածու բանաստեղծին բացաւ Երաժշտական Հանդիսին և Օրագրին սիւները, որու այն ատեն ինքն տէրն էր։ Վակնէր տրտմութեամբ մը հրաւէրքը ընդունեցաւ, և զանազան հատուածներ գրեց. յորս է Այցելութիւն մի առ Պեդովէն, և Վերջուժութիւն պատկերագութեանց վէպերի. յորում կը զարմանայ Վէպէրի ձայնից միջոցով իրեն դիւցազանց բաղդը թարգմանելու հզօր կարողութեանը վրայ։

Քաջասիրտ երաժշտապետն օրաւան մէջ քննադատութեան նուիրելով գրիչը, գիշերը կը զբաղէր Ռիհենցիի, բանաստեղծութիւն քնարերգական հինգ արարուածով։ Ինքն զայն 'ի գլուխ հանեց սոսկալի նեղութեանց մէջ, որք կը հասնին այն աղքատ մարդկանց վրայ, որ նիւթական կենաց շահերը գաղափարի մը կատարման, հոգւոյ անընդդիմադրելի և սրբազան ախտոյքի մը կը զոհեն։ Երբ Ռիհենցի, քսանեհինգ տարի կայ, առաջին անգամ կ'ընծայուէր յիտալիա, Վենետիկոյ Ֆէնիչէ թատրոնին մէջ, այն զօրաւոր ներդաշնակութիւնքը լսելու ժամանակ, չէիր կրնար չմտածել ձմերան այն զարհուրելի գիշերները, որոց՝ միայնակ և խեղճ երգայարդարն զայնս գրելու համար կը համբերէր։ Այլ բաղդն փութով նպաստամատոյց եղաւ Ռիհենցիի. Տրեզտայի թագաւորական թատրոնին մէջ, ուր առաջին անգամ ներկայացուեցաւ, Շրէօտէր-Տրվրիան ողբերգական երգչին ներկայութեամբ, երգահանն աշխուժիւ ծափահարեցաւ։ Սաքսոնիոյ թագաւորն յափշտակուած էր։ Ուզեց տեսնել զՎակնէր. անուանեց զինքը առաջին երաժշտապետ մատրան, որ այն ատեն Մորլաքիի մահուամբ դատարկ էր։ Եւ Վակնէր, թերևս սարսափմամբ յիշելով իրեն փողոյ աշխատութիւնքը, ընդունեցաւ։ Առանց այլ ևս ամեն օր կտոր մը հաց հայթհայթելու անհանգստութեանց, իրեն աշխատութեանցը տուաւ ինքզինքը, գրուցերգութեան (mélodramme) նորաձևութեանը, որ կը մամոր իր ուղեղին մէջ, իր «ապագայ երաժշտութեանը». վասն զի նոյն իսկ Ռիհենցին իրեն համար անցելոյն երաժշտութեան կը պատկանէր, և յայն սակս կը մերժէր զայն։

*
* *

Թէ արդեօք յորում կը կայանայ Վակնէրի նորաձևութիւնն, արդէն իսկ ծանօթ է։ Ինքն մեծ նորաձևող մ'է, այլ ուղիղ գծով կ'իջնէ 'ի Վէպէրէ և 'ի Կլուքէ։ Վէպէրի պէս կ'ուզէր յայտանիշ ցուցընել իր դիւցազանքը քաղցրերգութեամբ (mélodie) և մեկն ձայնիւք զիրենք զանազանել տալ։ Կլուքի պէս կ'ուզէր ջնջել կարի ակն յայտնի անհաւասարութիւն մի ընդ մէջ եղանակի (air) և վիպածի (récitatif) (իրեն խօսքերն են) — Կլուքի պէս կ'ուզէր ստիպել երաժշտութիւնը ուրիշ բան չըլլալու բայց՝ եթէ կրնայ՝ ըսուելիք արտայայտութիւն, նկարագրութիւն որոյ փափկագոյն խօսից, դրից, շարժմանց։

Կրնայ հարցուիլ թէ Վակնէր այս օդային սկզբանց հետևելով, մնաց միշտ պայծառ իբրև զԿլուք, կամ երբեմն մանաւանդ խորին ըլլալու համար՝ խրթին, զանազան ըլլալու համար՝ կընճռոտ, ինչպէս թերևս իր Նիպէլունկեններուն չորեքբանութեան (tétralogie) մէջ, անսահման երգի տեսակ մը, յորում կ'երգէ գերմանական ծագումը, համագերմանականութեան դաշնակուոր և մթին մեծ Աստուածաշունչ Գիրքը։

Այլ Վակնէր առաջին յանդգնութիւններէն 'ի վեր գիտէր թէ իրեն ժամանակակիցքն չէին կրնար հասկընալ զինքը։

« Զունեցայ երբեք հասկըցուելու բաղդը, — կը գրէ ինքն՝ իրեն մէկ գրոց յառաջաբանին մէջ, յորում ինքզինքը կը բացատրէ, կը մեկնէ, կը լուսաբանէ և կը գովէ։ — Զունեցայ երբեք հասկըցուելու բաղդը. ոչ քննադատք, ոչ հասարակութիւնն իմ գործոցս և իմ նպատակիս միտքը իմացան։ Բայց 'ի քանի մը բարեկամաց, ոչ ոք իմ զգացմանցս հետ միաբանեցաւ, և շատ փորձերէ ետքը հարկ եղաւ ինձ ճանչնալ, որ ներկայ սերնդեանէս ակնկալելու բան չունիմ. միայն ապագային համար է որ կ'աշխատիմ »։

digitised by A.R.A.R.@

Այս վերջին աստուածն է՝ որ երաժշտութեան ապագայի տիտղոսի գիւտն հանեց. անոր համար Յովակիմ Ռաֆֆին, ով որ անոր վրայ խօսք կ'ընէր՝ ծիծաղելով կ'ըսէր. « Ապագային երաժշտութիւն է, այնպէս չէ՞.... Այն ատեն չխօսինք »։

* * *

Ի 1845ին, Վակնէր իր Դանհայզէրն աւարտեց, ներշնչեալ 'ի նա Աստղկան լերին գերմանական հին աւանդութենէն և մենաւոր դղեկին տեսլենէն, զոր տեսաւ Դուրինկիոյ հովտին մէջ, մինչդեռ կ'ուղևորէր 'ի Տրեզտա։ Ամենքը Դանհայզէրի յաղթանակին կը սպասէին, այլ ընդհակառակն անկում մ'եղաւ։ Միայն յետոյ ուրեմն պիտի հաճոյ անցնէր, մանաւանդ նախերգն (ouverture), Վակնէրի յօրինածներէն շքեղագոյնն։ Լոհէնկրինը պատրաստ էր 1848ին, բայց միայն 1850ին կրցաւ ներկայացուիլ, վասն զի հեղինակն, յեղաշրջիկ նաև 'ի քաղաքագիտութեան, ստիպեցաւ 'ի Զուիցերի ապաւէն փնտրել, եթէ կ'ուզէր մորթը ազատել, չերտափակաց մէջ կատաղաբար պատերազմելուն համար։ Այն փախստեան առանձին հանգամանքն ծաղրաշարժք են։ Վակնէր իր գրպանաց մէջ դրամ մ'ալ չունէր. և հարկեցաւ դնել 'ի գրաւի Ռիէնցիի ամբողջ օրինակը։

Ի Գերմանիա դառնալը իրեն արգիլուելով, քաշուեցաւ 'ի Ցուրիկ, ուր ապրեցաւ վանական միայնութեան մէջ, մտածելով այն ալպեան խիստ բնութեան ծոցոյն մէջ, և գրելով զՊատմութիւն թատրերգութեան և թանագործութեան, զոր հրատարակեց 1850-1851, և յարոյց արտայայտած տեսութեամբք և թերևս աւելի դաժանագոյն արհամարհոտ լեզուաւ, Պէրլիոզի ոճոյն պէս, նոր մրրիկներ։ Այն գիրքն եղաւ նշան ստոյգ ցամաքային պատերազմի՝ արուեստին ընդդիմագործաց և նորոգողաց մէջ, պատերազմ՝ յորում չպակսեցան կռուիք, գաւազանաշարժութիւնք և ուրիշ մարդկային բարկութեան նուաստ արտայայտութիւնք։

Իրեն թշնամեաց զուարթութիւնը յաւէտ զարթուցանողն այն էր՝ զոր Վակնէր անսահման քաղցրերգութիւն կը կոչէ, — քաղցրերգութիւն՝ զոր Իտալացիք, բերեալք յաւանդութենէ, 'ի հանճարոյ, առ սահմանեալն, առ թանձրացեալն, պիտի չկարենան թերևս երբեք մարսել։ Ու ինչ բան էր այս անսահման քաղցրերգութիւնս։ Նոյն ինքն Վակնէր կը մեկնէ զայն երևակայական երևութով իշի մը մէջ գերմանական ոճով, ինչ էր և ինչ ուզեց միշտ ամենայնիւ յամենայնի ձևալ։

« Քաղցրերգութիւնն, կը գրէ ինքն, նախ և առաջ պէտք է ծնուցանէ 'ի հոգիս մեր տրամադրութիւն մը, նման անոր՝ զոր անտառ մը տրևուն մոլից ժամանակ կը ծնուցանէ մարդուս վրայ, որ թողլով քաղաքին շառաչը՝ կ'երթայ շրջագայելու։ Այս մարդս առ սակաւ սակաւ կը թողու յետնէ ինքզինքն անփոփման. իր կարողութիւնքն՝ քաղաքին աղմկէն ազատած, կը բացուին և ճանաչման նոր կերպ մը կը ստանան։ Հոխացեալ, եթէ կարելի է ըսել, նոր ըզգայութեամբ մը, իր ականջն առաւել քան զառաւել թափանցող կը լինի. ինքն կ'որոշէ աճեցուն յստակութեամբ անսահման զանազանութեան մը ձայները որ անտառին մէջ կը զարթնուն 'ի նմա. ձայնք երթալով անդադար կը տարբերին 'ի միմեանց. ինքն կը լսէ զայն զոր չի կարծէր թէ երբեք լսած ըլլայ. նոյն այն ձայնից թուոյն հետ նորօրինակ կերպով իրենց սաստկութիւնն կ'աճի. հնչմունք ևս քան զևս զօշաւոր կը լինին։ Ըստ համեմատութեան որ ինքն կը լսէ որոշ ձայներու, զանազան կերպերու աւելի մեծ թիւ մը, նոյն ինքն մի և նոյն այս հնչմանցս մէջ որ կը պայծառանան, կ'ուռին և կ'իշխեն անոր, կը ճանչնայ անտառին մեծ, միակ քաղցրերգութիւնը, և նոյն այս քաղցրերգութիւնս է որ 'ի սկզբան կրօնական տպաւորութեամբ մը ազդեր էր 'ի նա »։

* * *

Էր 1859 տարին, և Վակնէր Վենետկոյ լռութեանց մէջ, կը հանէր 'ի գլուխ իր Դրիստանոյ և Իզոլդայ թատրերգութիւնը, զոր երկու տարի առաջ սկսեր էր։ Ցայժմ բոլորովին դրժեր էր ինքն գրուցերգութեան օրինաց և աւանդութեանց. իրեն տեսութիւնները գործածեր էր 'ի նմա, անսահման քաղցրերգութեան հետ 'ի միասին, բայց շատերուն մէջ անսահման տաղտկութիւն պատճառեց։ Նախերգանքն (prélude) հեշտական և սիրալիր է, սիրոյ հշմարիտ մրմունջ մ'է. այլ թատրերգութեան գլխաւոր երկձայնն, որու միայն բանաստեղծութիւնն անընդհատ ութ էջ կը բռնէ միշտ այս նիւթոյս վրայ, Ուրեմն դու իմ ես. ունիմ ես զքեզ. և կարենմ ընդգրկել զքեզ. և արդարև հշմարիտ է. ստուգիւ դու ինքնին իցես.... իրեն երկայնութեամբն և միակերպութեամբն (կ'ըսուի) թէ քնացընէ ոտքի վրայ զօրաց գունդ մը։ Դրիստանոյ և Իզոլդայէն առաջ, զոր ինքն, 'ի պատիւ երևաց մըտուցած նորաձևութեանց, շատ աւելի նախամեծար կը համարէր իր ուրիշ գրածներէն, գրեց Ուրուական նաւը, ներշնչեալ Նորվեկիայի ծովափանց ալէկոծութենէ մը, որու այն զոհ եղաւ 39ին ամարան մէջ երբ կ'ուղղէր 'ի Բարիզ, և նաւաստիներէն իրեն պատմած տխուր առասպելէ մը։ Հոլլենտէր, բանագործութեան առաջին դիւցազն, զոր 'ի սկզբան Վակնէր թռչող հոլանտացի կը կոչէ, տեսակ մը ծովային թափառական Հրեայ է, հրաշալի նաւու մը վրայ

digitised by A.R.A.R.@

ահօղին ովկիանոսին մէջ յածելու դատապարտուած, կենդանի դիակոնց զառամեալ խառնաղանճով մը, կարմիրներանգ առագաստներով, և ինքն, բոլորովին թուխ հագած, մեծ թիկնոցի մը մէջ փաթթուած, տմոյն դիմօք, խաժոռահայեաց, յուսահատութեամբ 'ի սրտին։ Ուրուական նաւուն նախերգն, ծովային մրրկի մը նկարագրութիւն, ոսկրները դող կը հանէ. քառաձայնով երգեալ մասերն՝ որ կը նմանին ծովային ալեաց ամբառնալուն, իրենց վայրենի ներդաշնակութեամբն յափշտակիչ թռչնոց կառանչը կը յիշեցընեն, մրրկի ժամանակ. երբ անգամ մը լսես, ալ չես մոռնար։

***

Ի Վիեննա հրաժարեցան երաժիշտք նուագելու զԴրիստանն, և ոչ ոք 'ի ձեռնարկուաց թատրոնի կ'ուզէր ներկայացընել զայն։ Այն ատեն եղաւ որ Պաւիերայի թագաւորն, Վակների վրայ սքանչացեալն, երաժշտապետին օգնութեան հասաւ, անուանելով զնա երաժշտապետ մատրան, տալով իրեն բնակութիւն շքեղութեամբ բուն իրեն պալատան մէջ, և ինչուան իրեն արձան մը կանգնել տալով 'ի Մոնագոյ, որու թատրոնին մէջ 'ի 10 յունիսի 1865ին հրամայեց որ ներկայացուի Դրիստանն և Իզոլդա։

Մայսդէրզինկէրներն (Նորիմպերկայ երգիչ երաժշտապետք) նուագեցին զԴրիստանն, և հռչակաւոր և մեծ յաջողութիւն մ'ունեցան։ Ասոր և Դաննհայզէր թատերգութեան մէջ, Ֆէլիբբի (իտալացի արդի քննադատ) կը նշանակէ մերձաւորութիւնքը և տարբերութիւնքը. «Դաննհայզէրն ասպետութեան բանագործութիւն մ'է, երևակերպ, առասպելական, բոլորովին գաղափարական. մինչդեռ Մայսդէրզինկէրներուն մէջ կայ քաղաքային առասպել, կատակերգական բանագործութիւն, և 'ի վեր քան զամենայն Գերմանիոյ ազատ քաղաքաց միջին դարն, կենդանացեալ 'ի կռուոյ դպրոցական մեծաբանական ոգւոյ (pédantisme) ընդ ժողովրդական բանաստեղծութեան և ընդ այժմեան ներշնչութեան»։

Սակայն ոչ ոք կրնայ հայիլ 'ի Վակնէր իբրև առաջին կարգի բանաստեղծ. գրքոյկքն զոր նոյն ինքն գրեց, իրենց ոճովն կը վերաբերին անհեթեթ և ստորին բանաստեղծութեան, թէպէտ և միշտ բարձր գաղափարական մը — առասպելական գաղափարականն, — փոխ առած յաւանդութենէ կամ ժողովրդական մատենագրութենէ, — կը վերամբառնայ զայն և կը լուսաւորէ։

Ամենքը կը յիշեն որ 'ի 1876ին նուագեցաւ յօգոստոսի չորս օրուան մէջ Նիպէլունկիններուն չորեքբանութիւնն, Պայրէօթի թատրոնին մէջ, որ մասնաւոր շինուեցաւ Վակների թատերգութեանց համար գոգաւոր կոնաքերներու մէջ, 'ի հրապարակին խորասուզեալ երաժշտարանով և այնպիսի նորանշան մեքենաներով որ ինչուան ամպեր կը ձևացընէին, ոչ ստուարաթղթով, այլ ճշմարիտ խտացեալ ջրային շոգւով։ Բարսիֆալն, երաժշտապետին վերջի աշխատութիւնն, ընծայուեցաւ 'ի Պայրէօթ անցեալ յուլիսի. ինքն անոր վրայ աշխատած էր 1876էն ց1881, և կը համարէր իր շքեղագոյն գլուխ գործոցը։ Վերջերը երաժշտական նոր բանագործութեան մը վրայ կ'աշխատէր, Պուտտա, և կը գրէր իր յիշատակարանքը, զոր արդէն տարիներով առաջ սկսած էր։

***

Հիմայ հզօր երաժշտապետն ուրիշ բան չէ բայց ցուրտ դիակ մը, զմռսեալ, դագաղի մը մէջ փակուած։ Այն իրեն սիրտն որ խիստ արուեստին համար այնքան թնդաց և խորախորագոյն զօրօղութեամբ բարձրացաւ, և որու ամենօրեայ կռիւք մահացու խոցեր տուին, յաւիտեան կանգ առաւ հօն, 'ի Վենետիկ, բանաստեղծից, երաժշտաց, արուեստագիտաց սիրելի քաղաք, ժամը 2 ու կիսուն յետ միջօրէի 13 փետրուարի, Վենտրամին փառաւոր պալատան մէջ, — մինչդեռ ստորակայ Մեծ Ջրանցից մէջ, կոնտոլավարք անձկաւէտ կը սպասէին որ քաջանուն օտարականն իջնէ ինչպէս սովոր էր՝ 'ի կոնտոլայն, լճակին աղային օդը ծծելու համար, որու վրայ սևեռեալ, կեդրոնացեալ աչօք ինքն շատ անգամ երևակայեր էր։

Մարմինն անշուք կերպով 'ի Պայրէօթ փոխադրուեցաւ, որու ետևէն կ'երթային արտասուալից ընտանիքն։ — Ի 1870ին, ինքն ամուսնացեր էր Լիցի դստերաց միոյն հետ, Գոզիմա, յորմէ որդի մ'ունեցաւ, Սիկֆրիտոյ անուամբ, ինչպէս չորեքբանութեան անձն, և այն առասպելական, երևակերպ աշխարհին, որու վրայ ինքն իբրև ճշմարիտ հիւսիսային հանճար խօսեցաւ և յորում իշխան է։

digitised by A.R.A.R.@